«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ռազմական ամբիոն

Հետազոտական աշխատանք

Ռազմական ուսուցման արդյունավետության և որակի բարձրացման ուղիները

Կատարող՝ Ս.Վ. ԱԼԹՈՒՆՅԱՆ

Ղեկավար՝ Ե.Պ.ՏՈՆՈՅԱՆ

Գյումրի – 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Գլուխ1 - Ռազմական կրթության ապահովման բովանդակությունն ու մեխանիզմները

1.1. Ռազմական կրթություն հասկացության էությունը, բովանդակությունն ու նշանակությունը……..……..…5

1.2. Ռազմական կրթության ապահովման մեխանիզմներն ու առանձնահատկությունները……11

Եզրակացություն……24

Օգտագործված գրականության ցանկ ……..……..…25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Կրթության որակ ասելով հասկանում ենք կրթական համակարգի այն բնութագիրը, որն արտացոլում է իրական կրթական արդյունքների համապատասխանությունը նորմատիվային պահանջներին, սոցիալական և անձնային սպասելիքներին: Կրթության որակի լուրջ խնդիրները, այդ թվում մասնագիտական, կարելի է վերագրել երկրի զարգացման անցումային շրջանի երկարաձգումներին: Հայաստանում 20-րդ դարի 90-ական թթ. համակարգային սոցիալտնտեսական ճգնաժամը բացասական կերպով է արտացոլվել նաև կրթական համակարգի վրա: Պետությունը հեռացել էր մասնագիտական կրթությունից, տեղի ունեցավ մասնագիտական կրթության համակարգի ավանդական կապերի խախտում գիտության և աշխատանքի համակարգի հետ: Մասնագիտական կրթությունը վերջին տարիներին, ըստ էության, զբաղվում էր ինքնագոյատևմամբ: Բացասական միտումների թվին են դասվում ռազմական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի կատարելագործմանն ու կենսագործունեությանն ուղղված բյուջետային ֆինանսավորման կրճատումը, կրթության առևտրայնացումը, դասախոսական աշխատանքի հեղինակության նվազումը, երիտասարդների մոտ որակյալ կրթություն ստանալու մոտիվացիայի բացակայությունը:Ժամանակակից աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումները, ինչպես նաև տարածաշրջանային մարտահրավերները շարունակում են պահպանել Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացմանը խոչընդոտող անմիջական և հավանական սպառնալիքները, որոնց չեզոքացումը սկզբունքային նոր մոտեցումներ ու ռեսուրսներ է պահանջում: ՀՀ սահմանադրական փոփոխությունները ենթադրում են պետության պաշտպանության կազմակերպման, ԶՈՒ ղեկավարման, այդ թվում ռազմական կրթության ոլորտի նկատմամբ առավել ուշադրություն և վերահսկողություն: Գիտության և տեխնիկայի նվաճումները ասպարեզ են հանում նոր սերնդի ռազմական կրթություն, ինչը պահանջում է վերանայել ռազմական գործողությունների բնույթը, օպերատիվ արվեստը: Մեր երկրի համար ամենառաջնային ու կարևոր է ռազմական ուսուցման, նրա ձևերի, մեթոդների կատարելագործումը, նոր մեթոդների ու միջոցների ներդրումը: Գաղտնիք չէ, որ մեր երկիրը կանգնած է պատերազմի վտանգի առաջ և սահմանների հուսալիությունը, անխախտելիությունը, խաղաղ բնակչության ու հենց իրենց՝ զինվորականների կյանքն ու անվտանգությունը կախված է նրանից, թե

ինչքանով է ՌՈՒՀ-երում ստացած գիտելիքը, անցած պրակտիկան բավարարում ժամանակակից ռազմական մտքին, տեխնիկական հնարավորություններին ու պահանջներին: ՀՀ զինված ուժերը պետք է ունակ լինեն ռազմաքաղաքական ու ռազմական գործիքակազմով զսպել լայնածավալ ռազմական գործողությունների վերսկսման սպառնալիքները և պատրաստ լինեն իրավիճակի ցանկացած զարգացման՝, գործի դնելով իրենց տրամադրության տակ գտնվող ռազմաքաղաքական ռեսուրսը, արդիականացված զինանոցը և թերևս ամենակարևորը՝ սպաների ու զինվորների կրթական ու մարտական վարպետությունը:

ԳԼՈՒԽ 1

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1.1 ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ռազմական կրթությունը ռազմական անվտանգության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների ուսուցման, խաղաղ ու պատերազմական պայմաններում այդ գիտելիքները կիրառելու հմտության ձևավորման կարգավորված գործընթաց է: Այն նպատակաուղղված է այլ պետության հարձակումից հարազատ պետության, նրա բնակչության, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության զինված պաշտպանությանը, զինված ուժերի մասնակցությամբ ազգային ու պետական շահերի, ինչպես նաև միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման համար կադրային ռեսուրսի պատրաստմանը: Ռազմական կրթությունը պաշտպանական կրթության բաղկացուցիչ մասն է և ռազմական քաղաքականության արդյունավետության ապահովման միջոցը: **<<Կրթություն>>** և **<< ուսուցում>>** հասկացությունները փոխկապակցված են, փոխազդում են և նպատակաուղված են միևնույն վերջնարդյունքին, այն է՝ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռք բերումը: ***Կրթությունը գիտելիքների յուրացման ընթացքն ու արդյունքներն են, իսկ ուսուցումը մարդուն կրթելու անընդմեջ գործընթացը՝ գիտելիքների հաղորդումն ու յուրացումը:***

Զինծառայողների ուսուցումը հրամանատարների և ենթակա անձնակազմի միջև ընթացող երկկողմանի, ուղղորդված, պլանավորված, կազմակերպված ճանաչողական և ծառայողամարտական գործունեություն է, որի նպատակը զինվորներին հայրենիքի պաշտպանության համար անհրաժեշտ գիտելիքների հաղորդումն է, նրանց կարողությունների, հմտությունների և բարոյամարտական որակների ձևավորումը: Ռազմական ուսուցումն իրականացվում է զինվորական դաստիարակության գործընթացին զուգահեռ՝ նրա հետ կազմելով անբաժանելի միասնություն: Կարևոր է որպես մեկ ամբողջություն դիտել ռազմական կրթության և կադրերի պատրաստման համակարգերը, որոնք կադրային քաղաքականության հիմնասյուներն են: Այդ միասնական համակարգի հիմքում *<<ուսուցում ծառայության մնացած ժամանակահատվածի համար>>* սկզբունքի փոխարեն պետք է դրվի <<ուսուցում ամբողջ ծառայության ընթացքում>> որը,

մեր կարծիքով, պետք է դառնա ռազմական ոլորտի կրթական ծրագրի կազմակերպման և իրականացման կարգախոսը:

Զինծառայողների ուսուցման գործընթացի օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները, ուսուցման կազմակերպման ձևերն ուսումնասիրում է զինվորական ընդհանուր դիդակտիկան՝ որպես զինվորական մանկավարժության բաժին: Նրա հիմնական տարրերը գիտելիքներն են, հմտությունները և կարողությունները: Գիտելիքները երևույթների, շրջակա միջավայրի մասին մարդկության փորձով հաստատված տեղեկություններ են, մարդկության ընդհանրացված փորձի, նրա ձեռքբերումների համակարգված ամբողջությունը [7, 40էջ]: Զինվորական գործունեությունը, ռազմական գործի պատմությունը, ժամանակակից ռազմատեխնիկական առաջընթացն ապահովում են զինծառայողներին անհրաժեշտ այն գիտելիքների համակարգը, որոնք պետք է օգնեն նրանց հաջողության հասնելու ժամանակակից մարտում: **Ռազմամանկավարժական** գործընթացի բովանդակությունը հրամանատարության նպատակաուղղված ուսումնադաստիարակչական աշխատանքն է, որն ուղղված է զինվորի մշտական մարտական պատրաստության ապահովմանը:Այդ գործընթացը բնորոշվում է իր երկկողմանիությամբ/հրամանատարների ու ենթակաների փոխադարձ գործունեություն/ և ներքոհիշյալ առանձնահատկություններով՝

- Խիստ կարճաժամկետ է և սահմանափակ
- Ուղեկցվում է սահմանադրական, ծառայողական պարտականությունների կատարմամբ
- Մանկավարժական գործընթացի գործող անձինք զինված են, ունեն իրենց ամրագրված ռազմական տեխնիկա
- Մանկավարժական միևնույն գործընթացում գործառական, տարածական և ժամանակային առումով ընդգրկված են տարբեր կրթական մակարդակ ունեցող մարդիկ
- Նույն մանկավարժական գործընթացում ընդգրկված են տարբեր տարիքի, տարբեր տարածաշրջանների, տարբեր սոցիալական խմբերի ու խառնվածքի տեր մարդիկ
- Մանկավարժական գործընթացը նպատակաուղղված է մարտական առաջադրանքների կոլեկտիվ ու համաձայնեցված կատարմանը և այլն:

Ռազմամանկավարժական գործընթացն ունի խիստ կիրառական ու կիրառական-ներդրումային բնույթ: Այսինքն՝ զինվորի նկատմամբ կիրառված դաստիարակչական ազդեցությունը և գիտելիքների ուսուցումն ինչքան էլ հեռամետ նպատակ ունենան, միևնույն է, դրանք միտված են մոտալուտ տակտիկական խնդիրների լուծմանը[22]: Քիչ չեն այն դեպքերը, երբ զինվորը մի քանի օրում տիրապետում է զենքին և մասնակցում մարտի կամ մանկավարժական տեսանկյունից կարճ ժամկետում/1-2 ամիս/ նորակոչիկ զինվորը տիրապետում, ձեռք է բերում մասնագիտություն և փոխարինում զորացրվողին: Մանկավարժական յուրաքանչյուր ծանրակշիռ գիտական հետազոտություն ներդրումային փուլում է լինում նվազագույնը հինգ տարվա ժամանակահատվածում, իսկ ռազմամանկավարժական գիտական հետազոտությունը ներդրումային փուլ է անցնում հինգերորդ ամսից սկսած:

Զինվորական դաստիարակությունը լուծում է որոշակի **ռազմական խնդիրներ:** Զինվորի կենցաղը, առօրյան, ուսումն ու աշխատանքը ռազմականացված են: Օրեցօր բարդացող զենքի ու ռազմական տեխնիկայի յուրացման համար պահանջվում է ոչ միայն ուժերի գերլարվածություն, այլև ուսուցման ու դաստիարակության բովանդակության, սկզբունքների, մեթոդներ և ձևերի վերանայում ու համապատասխանեցում: Հրթիռային և զրահատանկային տեխնիկայի կատարելագործումը զինծառայողների ուսուցման ու դաստիարակության գործում՝ ֆիզիկական ու բարոյականային որակներ հետ, այսօր առաջին տեղ է մղել իմացական ունակությունները: Այսպես՝ 122 միլիմետրանոց հրանոթի 1 կրակոցը 30 վայրկյան նորմատիվային ժամանակում

ապահովելու և <<գերազանց>> արդյունքի հասնելու համար 5-7 հոգանոց հաշվարկից պահանջվում է 10-12 գործողություն, իսկ նույն նորմատիվային ժամանակի ու գնահատականի համար պահնաջվող հրթիռային համակարգի կրակոցն ապահովելու դեպքում անհրաժեշտ է շուրջ 150 գործողություն: Բնական է, որ այս դեպքում ոչ միայն համգործակցություն ու արագություն է պահանջվում, այլև իմացական լուրջ կարողություններ[24]:

Ռազմամանկավարժական գործընթացը յուրահատուկ կառուցվածք ունի: Որպես կանոն, նրանում առանձնացվում են 2 փուլ՝ անհատական պատրաստություն և ստորաբաժանումների պատրաստություն: Ըստ լուծվող խնդիրների բնույթի՝ ուսումնադաստիարակչական գործընթացը նույնպես փուլերի է բաժանված՝ ձմեռային ու ամառային: Ռազմամանկավարժական գործընթացի էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ ռազմական գործի իմացությունը, ռազմական վարպետության հասնելը յուրաքանչյուր զինծառայողի պարտականությունն է, և հրաժարումը կանոնադրական պարտականություններից կարող է համարվել հրաժարում հայրենիքի հանդեպ զինվորական պարտքից: Ռազմամանկավարժական գործընթացն իրականացվում է ծառայողական գործունեության հետ անբաժանելի միասնությամբ և կրում է վառ արտահայտված գործնական բնույթ: Այսինք՝ ուսուցման ընթացքում ստացած գիտելիքները, կարողությունները և հմտություններն անմիջապես կիրառվում են մարտական պատրաստության և պատրաստականության պարապմունքների անցկացման, ներքին ու պահակային ծառայության կատարման, մարտական հերթապահության իրականացման ժամանակ և ծառայողական այլ գործընթացներում:

Ուսումնադաստիարակչական գործընթացը բանակում կրում է վառ արտահայտված **համակենտրոնացված բնույթ,** երբ որոշակի փուլում ուսուցվող նյութը տրվում է նաև մյուս փուլերում: Այսպիսի դեպքերում շատ կարևոր է, որ նյութի կրկնողությունը համադրվի, զուգակցվի նոր նյութին կամ դրա որոշ տարրերին, հակառակ դեպքում զինծառայողը կկորցնի հետքրքրությունը պարապմունքների նկատմամբ:

Ռազմամանկավարժական գործընթացն ունի որոշակի առանձնահատուկ պայմաններ ու նախադրյալներ, որոնք ուղղակիորեն են ազդում մշտական մարտական պատրաստականության ապահովման վրա: Ինչքան էլ փորձենք ռազմական ուսուցումն ու դաստիարակությունը պլանավորել և կազմակերպել հեռամետ նպատակներով, միևնույն է, դրանք սահմանափակված են որոշակի

ժամանակահատվածով՝ մինչև 2 տարի ժամկետային ծառայության, 20-25 տարի՝ գերժամկետ ծառայության համար: Ռազմամանկավարժական գործընթացի կարևոր **առանձնահատկություններից** մեկն էլ այն է, որ ուսուցանվողներն ունեն կրթական տարբեր մակարդակ (նույն ծրագրով ուսուցանվում են և՛ բարձրագույն, և՛ թերի բարձրագույն, և՛ միջնակարգ, հաճախ նաև ոչ լրիվ միջնակարգ կրթություն ունեցող զինծառայողները)[23]: Բացի այդ նրանք ունեն յուրահատուկ խառնվածք ու բնավորության գծեր, տարբեր ընտանիքներից ու սոցիալական շերտերից են: Եվ բնական է, որ այս բոլորն առանձնահատուկ բնույթ են տալիս ռազմամանկավարժական ամբողջ գործընթացին:

Քանի որ զինվորական գործն ունի ակնհայտորեն դրսևորված կիրառական, գործնական բնույթ և ուղղվածություն, ապա անհրաժեշտ է, որ զինծառայողները գործնականում կարողանան օգտագործել իրենց գիտելիքները, կիրառեն դրանք ստեղծագործաբար, տիրապետեն մարտի վարման, տեխնիկայի սպասարկման և զենքի գործածության հմտություններին: Ընդ որում զինվորական գործի յուրահատկությունը պահանջում է, որ ձևավորվեն զինծառայողի այնպիսի հմտություններ և կարողություններ, որոնք նրան կօգնեն նախ՝ անվերապահորեն և հստակորեն կատարելու տրված հրամանները հատկանշական իրավիճակներում, ապա՝ արագորեն կողմնորոշվել անորոշ, կյանքի համար վտանգավոր իրադրություններում, ինչ- որ բան որոշել ու այն իրագործել:

Ռազմամանկավարժական գործընթացի արդյունավետ կազմակերպման, ուսուցման նպատակին հասնելու համար, այսինքն ուսումնական նյութի հիմնավոր և գիտակցական յուրացման գործում կարևոր նշանակություն ունի հրամանատարների՝ ուսուցման սկզբունքների իմացությունը[25]: Զինվորական ուսուցման սկզբունքները ելակետային մանկավարժական դրույթներ են և արտացոլում են ռազմամանկավարժական գործընթացի օրինաչափությունները:

(

Դրանք բխում են ուսուցման օրինաչափություններից, ռազմամանկավարժական գործընթացի առանձնահատկություններից, ժամանակակից մարտի պայմաններից, ըստ դրանց զինծառայողներին ներկայացվող պահանջներից: Այդ սկզբունքներն են՝ *գիտականության, գիտակցականության և ակտիվության, գննականության, համակարգվածության և հաջորդականության, մատչելիության, գիտելիքների, կարողությունների և հմտությունների կայունության, զինծառայողների անհատական և տարիքային առանձնահատկությունների նկատառման սկզբունք:*

Զինվորական ուսուցման արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև ուսուցման գործընթացի իրականացման մեթոդներով, դրանց ճիշտ ընտրությամբ ու կիրառմամբ: Ուսուցման մեթոդը կրթական խնդիրների լուծման միջոց է, նպատակներին հասնելու ճանապարհ: **Ռազմական ուսուցման մեթոդները** սովորեցնողի և սովորողի համատեղ աշխատանքի ձևերն են, որոնց օգնությամբ հրամանատարը/ուսուցանողը/ իր ենթականերին զինում է կայուն գիտելիքներով, անհրաժեշտ ունակություններով ու հմտություններով, նրանց մեջ ձևավորում բարոյական, հոգեբանական և կայուն մարտական հատկանիշներ:

Ավանդական դասակարգմամբ առանձնացվում է 5 մեթոդախումբ՝

- **Խոսքային մեթոդներ**՝բացատրություն, պատմել, զրույց, դասախոսություն, բանավեճ:
- **Գործնական մեթոդներ**՝ փորձ, վարժություններ, ուսումնաարտադրական աշխատանք:

- **Զննական մեթոդներ՝** ձևավորում, ցուցադրում, զինծառայողների ուսումնասիրությունները և դիտումները:
- **Տեսաձայնագրային մեթոդներ՝** տեսաձայնագրային սարքեր և միջոցներ:
- **Աշխատանք տպագիր աղբյուրներով՝** ընթերցանություն, մշակում, փոխադրություն, պլանի կազմում, կոնսպեկտավորում և այլն[26]:

Ուսուցման մեթոդների առավել ժամանակակից դասակարգման մեջ առանձնանում են **բացատրացուցադրական, վերարտադրողական, խնդրային/պրոբլեմային/, էվրիստիկ/որոնողական/ և հետազոտական մեթոդները**:

Զինվորական ուսուցման մեթոդների համակարգում առանձնահատուկ տեղ ունեն **ինքնուրույն աշխատանքի մեթոդները,** որոնք բաժանվում են 2 խմբի՝ինքնուրույն գործնական աշխատանքներ/օր. Տեխնիկայի ուսումնասիրություն, սպասարկում, առանձին դետալների միացում ու անջատում/ և ինքնուրույն տեսական աշխատանքներ/օր. Աշխատանք գրականությամբ, փաստաթղթերով/:

Զինծառայողների ուսուցման գործընթացում կիրառվում են ուսուցման հետևյալ ձևերը՝ **տեսական և գործնական պարապմունքներ, անհատական ուսուցում,համալիր մարզումներ, հրաձգություն, զորավարժություններ, լրացուցիչ պարապմունքներ:** Ռազմական ուսուցման գործընթացը գիտելիքներ հաղորդելուց, հմտություններ և կարողություններ ձևավորելուց, այսինք՝ կրթական գործառույթից բացի, ունի նաև դաստիարակող և զարգացնող գործառույթներ:

Այսպիսով կրթության որակը կարելի է դիտարկել որպես բազմաչափ հսկացություն: Այդ հասկացության բացահայտմանը անհրաժեշտ է մոտենալ գործընթացային մոտեցման տեսանկյունից: Գործընթացային մոտեցումը նշանակում է ղեկավարման անընդհատություն, առանձին կրթական գործընթացների հաջորդականությունն ու փոխադարձ կապը դրանց համակրգի շրջանակներում, ինչպես նաև դրանց համադրությունն ու փոխգործունեությունը:

1.2 ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ Զինված ուժերի առջև դրված խնդիրների լուծումը նպատակաուղղված է մոտ ապագայում հայկական բանակը մարտունակության սկզբունքորեն նոր մակարդակի հասցնելուն: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է կատարելագործել նաև ՀՀ ռազմական կրթության համակարգը:Կրթության համակարգի արդիականացումն անհրաժեշտ է լինում հիմնականում այն դեպքերում, երբ պետք է՝

- Կրթությունը համապատասխանեցնել գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիաների ասպարեզում տեղ գտած առաջընթացին
- Վերացնել պետության հետ մնալը որևէ ասպարեզում (օրինակ 1962 թվականին ԱՄՆ-ը 4.5 անգամ մեծացրեց կրթության ֆինանսավորման չափը՝ այդ պարամետրով գերազանցելով Խորհրդային միությանը)
- Ապահովել հասարակության ու տնտեսության նոր որակ, արագացնել հասարակության զարգացման տեմպերը
- Մեծացնել քաղաքական ու սոցիալական ընտրության հնարավորությունները, ինչը քաղաքացիներից պահանջում է պատրաստության մակարդակի բարձրացում
- Ստեղծել ձեռնարկվող բարեփոխումների արդյունքների հեռանկարային ամրապնդման ու շարունակականության համար մարդկային ու մտավոր ռեսուրս[17]:

Ռազմական, կամ ռազմամասնագիտական ուսուցումը (կրթությունը) զինվորական մասնագետների պատրաստման, որոկավորման բարձրացման և վերապատրաստման գործընթաց է, որն ուղեկցվում է ձեռք բերված կրթական մակարդակի փաստմամբ:[11,էջ 750]

Թեև արևմտյան մասնագիտական գրականության մեջ ռազմական կրթության համընդհանուր սահմանում չկա, սակայն մասնավոր ձևակերպումներն իրենց իմաստով մոտ են: Օրինակ՝ այդպիսի սահմանումներից է. << Մասնագիտական ռազմական կրթությունը ներառում է Պենտագոնի այն բոլոր ջանքերը, որոնք նպատակաուղղված են ոչ սպայական ու սպայական կադրերի այնպիսի գիտելիքների, հմտությունների ու հատկությունների ձևավորմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց պետությանը ծառայելու համար: Դա իր մեջ ներառում է ամենը՝ սկսած Վեստ-Փոյնտի նման ռազմական վարժարաններում նախասպայական ուսումից ու շարքայինների անհատական նախավարժեցումից մինչև ուսուցումը՝ նպատակուղղված առավել ավագ գեներալներին ու սերժանտներին: Ռազմական կրթությունը ներառում է զինծառայողների պատրաստումը իրենց ներկայիս պարտականությունների կատարմանը, հետագայում զբաղեցվելիք պաշտոններին և այն դիրքին, որը նրանք կունենան որպես ավագ ղեկավարներ>>:[15, էջ 175]

Լինելով պետական կրթական համակարգի բաղկացուցիչ մաս՝ ռազմական կրթության համակարգը << ռազմական, կրթական, գիտական, վերապատրաստման հաստատությունների, կրթության կառավարման մարմինների, կրթական չափորոշիչների ու ծրագրերի, ինչպես նաև կրթական համապատասխան միջավայրի և կիրառվող կրթական տեխնոլոգիաների ամբողջականություն է>>[2],

որը <<ապահովում է զինված ուժերի կիրառման, պլանավորման, կազմակերպման և կառավարման վերաբերյալ առկա գիտելիքների փոխանցումը, համապատասխան հմտությունների և կարողությունների ձևավորումը>>[3]:

ՀՀ ռազմական կրթության հայեցակարգի համաձայն՝ սպայական կազմի պատրաստումը կատարվում է հետևյալ փուլերով.

- Նախազորակոչային պատրաստում, որի ժամանակ կատարվում են զինվորական գործի նկատմամբ դպրոցականների հետաքրքրության և նախնական զինվորական պատրաստության հիմունքների, գիտելիքների և հմտությունների ձևավորում,
- Կրտսեր սպայական կազմի կրթություն, որով ապահովվում է մարտավարական մակարդակում ռազմական գիտելիքներին ու հմտություններին տիրապետող, կառավարչական ու հրամանատարական հատկություններով օժտված սպայական կազմի պատրաստումը, ներառյալ՝ քաղաքացիական բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ որպես սպայի թեկնածուի ուսուցումը, ինչպես նաև կրտսեր սպայակազմի վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը,
- Ավագ սպայական կազմի կրթություն, որով ապահովվում են օպերատիվ մարտավարական գործողությունների կառավարմանը և շտաբային աշխատանքներին տիրապետող՝ բարձրագույն ռազմական կրթությամբ սպաների պատրաստումն ու վերապատրաստումը,
- Բարձրագույն սպայական կազմի կրթություն, որով ապահովվում են զինվորական կամ պետական այլ ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կրթությունն ու վերապատրաստումը:[4]

Հարկ է նշել, որ ըստ Բոլոնյայի գործընթացի՝ ռազմական կրթությունը ևս կազմակերպվում է երկաստիճան կարգով՝ բակալավրի և մագիստրոսի մակարդակներով: Միևնույն ժամանակ, ՀՀ ազգային անվտանգության ապահովման գործում պաշտպանության ոլորտի կենսական առաջնահերթության հաշվառմամբ նախատեսվում է հանրապետության անվտանգային մտավոր ռեսուրսները պաշտպանական գերատեսչության շուրջ համախմբելու նպատակով կազմակերպել<<միջգերատեսչական ձևաչափով պաշտպանական-անվտանգային քաղաքագիտական բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթություն>>:

Փորձնական ծրագրով նման դասընթաց 2017 թվականի աշնանը հաջողությամբ կազմակերպվել է ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում:

Զինված ուժերի կազմավորման արդի փուլում ձևավորվել է

ռազմական/ռազմամասնագիտական/ բուհերի մի այնպիսի համակարգ, որն ապահովում է կրտսեր և ավագ սպայական կազմերի կրթությունը և ըստ մասնագիտությունների՝ որակավորման պետական կրթական չափորոշիչներով նախատեսված բակալավրի և մագիստրոսի որակավորումների շնորհումը:

Ինչպես նշվեց, ՀՀ Զինված ուժերն անհնար է արդիականացնել առանց ռազմական կրթության գործող համակարգի արդիականացման, նրա բովանդակային և կառուցվածքային նորացման: Այդ արդիականացումն ու նորացումը պետք է կատարվեն համակարգային նորամուծական մոտեցման հիման վրա և լինեն հստակ, հետևողական ու հակասություններից զուրկ: Ժամանակակից ռազմական կրթության արդիականացումը փուլային գործընթաց է: Առաջին փուլում պետք է բանաձևել ոլորտում եղած հիմնախնդիրները, երկրորդում՝ մշակել ու սահմանված կարգով հաստատել հայեցակարգ, որում ամրագրել արդիականացման հիմնական գործնական ուղությունները, երրորդում՝ մշակել ու վարել տեղեկատվական քաղաքականություն՝ նպատակաուղված արդիականացման գործընթացին մասնակցող մարդկանց գիտակցության վրա անհրաժեշտ ազդեցություն գործելուն, չորրորդում՝ ձևավորել վարվելակերպի շարժառիթները:

Պաշտպանության համակարգի գերագույն նպատակը մարտունակ, ապաքաղաքականացված, հասարակության համակողմանի ներգրավմամբ և ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվող զինված ուժերի ձևավորումն է: Այսպիսի զինուժ ունենալու համար պահանջվում են զգալի՝ Հայաստանի Հանրապետության հնարավորությունների համեմատ անհամաչափ մեծ միջոցներ, որոնք պետք է զուգակցվեն թափանցիկության բարձր չափորոշիչների, ուժերի և միջոցների առավելագույնն արդյունավետ օգտագործման, վատնումների բացառման և բանակի նկատմամբ հասարակության լիակատար վստահության հետ:

Հետևելով այս տրամաբանությանը՝ բոլորս պետք է առաջնորդվենք մեր պետության և ժողովրդի առաջ ունեցած պատմական առաքելության գիտակցումով: Ղեկավար պաշտոն զբաղեցնող ցանկացած անձ, առանց բացառության, պետք է գիտակցի, որ իրեն վստահված այս առաքելությունը լավագույնս իրականացնելու համար պետք է գերազանցություն դրսևորի երկու առանցքային գործառույթում: Առաջինը դա ենթականերին առաջնորդելն է: Առաջնորդիր սեփական օրինակով, մարդկանց խրախուսիր ըստ արժանիքների, պատժիր արդարացի կերպով, սահմանիր հստակ առաջադրանք, տուր դրա իրականացման խելամիտ ուղղորդում, թույլ տուր կարգապահ նախաձեռնողականություն՝ միաժամանակ վերահսկելով առաջադրանքի կատարումը և չխուսափելով ընդհանուր պատասխանատվությունից, և վերջապես՝ հանդուրժող եղիր ոչ էական վրիպումների

համար, և կտեսնես, որ ձևավորել ես բարձր կատարողականությամբ թիմ՝ դրա անդամների բնավորության, խորագիտակության և հանձնառության առողջ հավասարակշռմամբ: Երկրորդ առանցքային գործառույթը միջոցների մտապատկերումն է, դրանց պլանավորումը, ձեռքբերումը, հատկացումը և օգտագործման վերահսկողությունը: Նախևառաջ պետք է գիտակցենք, որ Հայաստանի մարդկային ռեսուրսները սահմանափակ են, հետևաբար հայոց զինուժի զինվորն ու սպան պետք է շեշտը դնեն ոչ թե քանակական առավելության, այլ որակական գերազանցության վրա: Յուրաքանչյուր հրամանատար և պաշտոնյա պետք է առաջնորդվի հասարակության և պետության կողմից հատկացված մարդկային, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսները պետության և հասարակության անվտանգության ապահովմանը առավելագույն արդյունավետությամբ ծառայեցնելու գիտակցումով: Ռեսուրսների ոչ նպատակային, ոչ արդյունքային, ոչ խնայողաբար և անարդյունավետ ծախսը հատկապես վնասակար ազդեցություն է գործում Հայաստանի նման սահմանափակ ֆինանսական հնարավորություններ և համեմատաբար մեծ զինված ուժեր ունեցող երկրների վրա: Բոլորս պետք է գիտակցենք, որ հասարակության կողմից Զինված ուժերին հատկացված նյութատեխնիկական և ֆինանսական միջոցները քաղաքացիների՝ սեփական սոցիալական, կրթական, առողջապահական և մյուս ոլորտներից խնայված և անվտանգության ապահովման առաջնահերթությունից ելնելով մեզ տրամադրված ռեսուրսներ են: Այս հարցն էլ ավելի է կարևորվում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն ունեցող երկրներում, երբ պետությունը պատասխանատվություն է կրում զինվորի կենցաղային պայմանների, սննդի, հագուստի, հանգստի և ժամանցի պայմանների ու մի շարք այլ խնդիրների համար: Այս տեսանկյունից յուրաքանչյուր հրամանատար պետք է գիտակցի ծնողների կողմից իրեն վստահված զորակոչիկների կյանքի, անվտանգության և բարեկեցության ապահովման բարձր պատասխանատվությունը: Մյուս կողմից՝ յուրաքանչյուր ժամկետային զինծառայող պետք է գիտակցի, որ լինելով հայրենիքի պաշտպան՝ ինքն այլևս չի գտնվում ծնողների և հարազատների խնամքի տակ, և ֆիզիկական ու հոգեպես պատրաստ լինի պատվով կրելու զինվորական ծառայության դժվարությունները և սահմանափակումները:

Որպես պաշտպանության ոլորտի և զինված ուժերի զարգացման առաջնահերթություն պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանը իր տեսլականում անդրադարձել է նաև ռազմական կրթության ոլորտին: <<Մենք պետք է հետևողական աշխատանքներ տանենք զինծառայողի կրթական ցենզի բարձրացման և ինտելեկտուալ մակարդակի աճի ուղղությամբ՝ որպես

Զինված ուժերի զարգացման ռազմավարության կարևորագույն ուղղություն: Մեր վերջնական նպատակն է բանակում արհեստավարժության և բարոյականության նոր չափանիշների ձևավորումը՝ հմուտ, պատվախնդիր ու առաջնորդ սպայական կազմով և վարժված, կրթված, շարժառիթավորված ու մարտունակ զինվորներով, որի համար ձեռնարկելու ենք քայլեր Զինված ուժերի մասնագիտական ինքնությունը և վարկանիշը ամրապնդելու ուղղությամբ, ընդհուպ՝ մինչև ազգային արժեքները խորհրդանշող նոր համազգեստի ներմուծումը: Կրթությունը անքակտելիորեն կապված է անձնակազմի կառավարման հետ: Պաշտպանության համակարգում ընթացող կադրային փոփոխությունները իրականացվելու են պետական կառավարման և քաղաքացիական հանրության կարող ուժերը ներգրավելու և առկա պրոֆեսիոնալ ռեսուրսը լավագույնս օգտագործելու փոխլրացնող ուղղություններով: Պաշտպանության նախարարության ղեկավարությունը կյանքի է կոչելու արժանիքների վրա հիմնված ծառայողական առաջխաղացման քաղաքականություն, ավելի ու ավելի պատասխանատու պաշտոններ վստահելով ուժեղ բնավորություն, առաջնորդական որակներ, մասնագիտական խորագիտակություն և առաքելության նկատմամբ հանձնառություն ունեցող պրոֆեսիոնալ զինվորականներին և աշխատակիցներին>>: [8,էջ11]

ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման պետական քաղաքականության առաջնային նպատակներից է բարձրագույն ռազմական կրթության համակարգի համար այնպիսի պայմանների ստեղծումը, որոնցում ապահովվի ապագա սպայի՝ որպես ինքնուրույնաբար մտածող անձնավորության ձևավորումը, մի մարդու, որը կարողանա արդյունավետ կերպով գործել ՀՀ Զինված ուժերում ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական իրադրություններում: Բարձրագույն ռազմական կրթության համակարգի արդյունավետ գործունեության համար համապատասխան պայմանների ստեղծումը ենթադրում է բնագավառի առջև ծառացած խնդիրների վերհանում, վերլուծում, լուծմանն ուղղված գործնական ուղությունների առանձնացում և առաջնահերթությունների որոշում՝ համապատասխան լուծումների նշմամբ:

Մասնագիտական գրականության ուսումնասիրմամբ մենք առանձնացրել ենք բարձրագույն ռազմական կրթական համակարգի արդյունավետության մեծացման հետևյալ հիմնական չափանիշները.

- ✓ Ռազմաուսումնական հաստատություններում ընդհանուր կրթության ներկայիս մակարդակի հաշվառմամբ դիմորդների նպատակային ընտրության համակարգի մշակումն ու կիրառումը

- ✓ Ուսուցման համար թեկնածուների ընտրազատման չափանիշների այնպիսի գործուն համակարգի մշակումն ու ներդրումը, որի շնորհիվ կմեծանա ընտրազատման արդյունքների համար հրամանատարների ու նրանց ենթակա ստորաբաժանումների պատասխանատվությունը
- ✓ Շարքային և կրտսեր հրամանատարական կազմի նախնական պատրաստման համակարգի կազմակերպման և հաստիքային կառուցվածքի կատարելագործումը
- ✓ Հրամանատարների մասնագիտական վերապատրաստման ուսումնական ծրագրերի մշակումը, ընդսմին պետք է նախատեսվեն նաև այնպիսի մասնագիտական ծրագրեր, որոնցով կապահովվի նրանց հեռակա ուսուցման հնարավորությունը,
- ✓ Ըստ մասնագիտությունների՝ պետական ուսումնական չափանիշների համալիր գիտական և մեթոդական ապահովման մշակումը,
- ✓ Գործնական ուղղվածությամբ կրթական ծրագրերի մշակումը, ինչով բազային ակադեմիական կրթության հետ մեկտեղ կապահովվի նաև որակյալ կիրառական մասնագիտական պատրաստումը,
- ✓ Ուսումնական հաստատությունների և մասնագիտական պատրաստման կենտրոնների ուսումնանյութական բազայի արդիականացումը,
- ✓ Ուսումնական մասնաշենքերի, համալիր ուսումնական զորավարժարանների վերակառուցումն ու նորերի շինարարությունը,
- ✓ Բոլոր աստիճանների կադրային ռեզերվների մասնագիտական վերապատրաստման և որակավորման բարձրացման համակարգի կատարելագործումը՝ ղեկավար պաշտոններում արդյունավետ ստաժավորման կազմակերպմամբ:

Ներկայումս հստակ կերպով առանձնանում են ռազմական կրթության արդիականացման հետևյալ հիմնական ուղղությունները. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունների անձնակազմի կառավարման համակարգի օպտիմալացում, ռազմական կրթության և գիտության միաձուլում, ռազմական կրթության որակի բարձրացում:[16, էջ 95]

Անձնակազմի կառավարման ընդհանուր արդյունավետ մոդելը բնութագրվում է հետևյալ հիմնական ցուցանիշներով.

- Առաջադրված անհատական խնդիրների լուծման արդյունավետություն՝ հաստատության ընդհանուր հաջողության մեջ անհատական ներդրում,
- Անձնակազմի աշխատանքային արդյունավետություն՝ կատարվող

- աշխատանքի անհրաժեշտ որակն ապահովելու համար անձնակազմի նպատակային խթանում, կադրերի ցածր հոսունություն և ժամանակի կորստի բացառում,
- Մասնակցային արդյունավետություն՝ ընդհանուր խնդիրների խմբովի լուծման և համագործակցության պատրաստակամություն ու կարողություն,
- Նյութական արդյունավետություն՝ ժամանակակից սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով, ուսումնանյութական բազայով, տեղեկատվական և գիտահետազոտական համալիրներով ապահովվածություն:

Անձնակազմի կառավարման արդյունավետության վրա ազդում են հաստատության մասշտաբը, ուսումնական խմբերի մասնագիտությունների առանձնահատկությունները, ֆինանսական հնարավորությունները, կադրային ներուժը և քաղաքականությունը: Անձնակազմի կառավարման գործում կարևոր տարրերից է տեղեկատվությունը: Առանց ժամանակակից տեղեկատվական քաղաքականության հնարավոր չէ լիարժեք կերպով իրականացնել կառավարման որևէ գործառույթ: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ օպտիմալացվում են կադրերի անհատական և որակական վերլուծության և հոսունության հաշվառման, անձնակազմի և ուսուցանվողների ուսուցման և որակավորման բարձրացման, առաջատար փորձի ուսումնասիրման և ներդրման գործընթացները [14,էջ210]: Անձնակազմի շարժի և հոսունության վերլուծությունը կարևոր է ռազմական բարձրագույն ուսումնական հաստատության գիտաուսումնական գործունեության պլանավորման և կառավարման տեսակետից:

<u>Բարձրագույն ռազմական ուսումնական հաստատության անձնակազմի կառավարման արդյունավետ համակարգը հնարավոր է կառուցել հետևյալ մեխանիզմների համատեղությամբ՝ պլանավորում, կազմակերպում, խթանում, վերահսկում:</u>

Պլանավորումը, որի ամենապատասխանատու խնդիրներն են կանխատեսումը և մոդելավորումը, հնարավորություն է տալիս սահմանելու նպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ առավել արդյունավետ մեթոդներն ու միջոցները, դրված խնդիրների լուծման ընթացքի գնահատման ցուցանիշների համակարգը:

Կազմակերպումը այժմ և ապագայում կազմակերպության հաջող գործունության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Դրա հիմնական խնդիրներն են՝ կազմակերպության ձևավորումը, նրա գործունեության ապահովումը ֆինանսներով, սարքավորանքով, աշխատանքային ռեսուրսներով:

Խթանումը այն նյութական ու բարոյական խթանիչների համախումբն է, որոնց հիման վրա մարդն իր աշխատանքային գործունեության ընթացքում իր առջև դնում է

կոնկրետ նպատակներ:

Վերահսկումն անհրաժեշտ է ընդունված որոշման և փաստացի արդյունքի ներդրման և տեղեկույթի հաղորդման առավելագույն արդյունավետության օպտիմալացման համար: Այն պետք է լինի օպերատիվ, հրապարակային և օբյեկտիվ:[13, էջ7-8]

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտություն է առաջանում որոշելու անձնակազմի կառավարման ռազմավարական ուղղությունները, նպատակները և խնդիրները, այսինքն՝ ձևավորելու անձնակազմի կառավարման համակարգի ռազմավարությունը: Բարձրագույն ռազմական ուսումնական հաստատության ռազմավարությունը ապահովում է հաստատության ընդհանուր նշանակության, քաղաքականության և ռազմավարության նպատակներին հասնելու համար պլանավորված միջոցառումների միջև տրամաբանական կապը: Այս պարագայում ռազմավարությունը մշակվում և իրագործվում է տարբեր մակարդակներում.

- Համապետական՝ ռազմական կրթություն, պետական/ՀՀ ԶՈՒ-ի/ պատվերի կատարման պարտավորություն, պատասխանատվություն, ապահովում և այլն,
- Կազմակերպական՝ անձնակազմի կառավարում, ռազմական կրթության որակի ապահովում, ֆինանսական քաղաքականություն, հասարակական պատասխանատվություն և այլն,
- Հաստատության ստորաբաժանումների՝ պրոֆեսորադասախոսական կազմի ծառայողների որակավորումների և մասնագիտական վարպետության զարգացման կառավարում և կատարելագործում,
- Անհատ ծառայողի որակավորումների և վարպետության կատարելագործման անընդհատություն, հեռանկարային մասնագիտական աճ, անհատական պահանջների բավարարում և այլն:

Որակյալ ռազմական մասնագետների պատրաստումը Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության ապահովման կարևոր ուղղություն է, առաջնահերթ խնդիրը: Դրան զուգընթաց, բարձրագույն ռազմական ուսումնական հաստատությունը լուծում է գիտահետազոտական, գիտատեխնիկական /նորամուծություն, նորարարություն, ժամանակակից ռազմական տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում, որակական կրթության որակի ապահովում/, հասարակական պահանջմունքների բավարարման խնդիրներ:

Ձինված ուժերի արդիականացումը չի կարելի դիտել առանց ռազմական գիտության զարգացման: Այստեղ հիմնական խնդիրն է ռազմական գիտության

արդյունավետության, պետական մակարդակով նրա պահանջվածության աստիճանի բարձրացումը, ռազմական ոլորտում գիտական հետազոտությունների և հեռանկարային մշակումների խթանումը, գիտական դպրոցների, ռազմագիտական կենտրոնների ստեղծումն ու զարգացումը: Ակնհայտ է, որ բարձրագույն ռազմական կրթության արդիականացումը պայմանավորված է ոչ միայն ռազմական գիտության զարգացմամբ, **այլև բարձրագույն ռազմական կրթության հետ նրա ինտեգրմամբ:**

Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունում գիտական աշխատանքը ուղղված է ռազմական տեսության և գիտագործնական մշակումների զարգացմանը: Նրա հիմնական ձևերն են գիտահետազոտական աշխատանքները, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, մենագրությունների, ատենախոսությունների, հոդվածների և այլ մասնագիտական գրականության ստեղծումը: ՌՈՒՀ-ներում կազմակերպվող գիտագործնական գիտաժողովներում, սեմինարներում, <<կլոր սեղաններում>> կուրսանտները և ունկնդիրները ձեռք են բերում հրապարակային ելույթների և գիտական բանավեճերի փորձ, մեր երկրում և արտասահմանում ստեղծված գիտական ու տեխնիկական նորամուծությունների մասին տեղեկույթի հավաքման և վերլուծության հմտություններ: Կուրսանտների և ունկնդիրների ռազմագիտական աշխատանքը կոչված է ձևավորելու ռազմագիտական ստեղծագործական գործունեության նկատմամբ հետաքրքրություն, զարգացնելու նրանց վերլուծական մտածողությունը և ինքնուրույնությունը, ռազմական գիտության արդիական խնդիրների լուծման գործում օգտագործելու նրանց ստեղծարար մտավոր ներուժը[10, էջ152]:

ՀՀ ԶՈՒ-ի արդիականացման ընդհանուր ռազմավարական տրամաբանությունը պահանջում է ստեղծել ժամանակակից, շարժունակ, լավ սպառազինված բանակ, որը պատրաստ լինի ապահովելու մեր պետության բարձր մակարդակի պաշտպանությունն ու պաշտպանական անվտանգությունը: **Բանակի արդիականացումը պետք է հիմնված լինի նոր տիպի՝ գրագետ, հանկարծակի ծագող բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվող ու ճիշտ որոշումներ ընդունող, նորամուծական ստեղծագործական մտածողությամբ օժտված սպաների-ռազմագետների-հոգեբան- մանկավարժների խաղաղ ու պատերազմական շրջանների զինվորական ու քազաքացիական կյանքում աննկուն առաջնորդների ու հայրենասեր քաղաքացիների եղբայրության վրա, իսկ նման անձնավորություններ ձևավորելու համար անհրաժեշտ է համապատասխանաբար բարեփոխել ռազմական կրթության համակարգը, նրա բովանդակային, կառուցվածքային ու մեթոդաբանական էությունը:**

Դրա համար առաջնահերթ խնդիրներ են մշակել ՀՀ ԶՈՒ-ի նոր պահանջներին համապատասխանող պետական կրթական չափորոշիչներ, բոլոր զինվորական մասնագիտությունների գծով շրջանավարտների ռազմամասնագիտական պատրաստման համար որակավորման նոր պահանջներ, օգտագործել կոմպետենտ մոտեցում, համաձայն որի՝ ռազմական կրթության արդյունքը պետք է լինի ոչ թե ցաք ու ցրիվ գիտելիքները, թերի հմտությունները, այլ համակարգված ու խոր գիտելիքներն ու հմտությունները իր գործունեության մեջ արդյունավետ կերպով ու լիարժեք օգտագործելու կարողությունը:

Որպեսզի ռազմական համալսարաններում ստացված գիտելիքները որոշ ժամանակ անց չկորցնեն իրենց այժմեականությունը և մշտապես թարմացվեն, պետական մակարդակով ձևավորվում է զինծառայողների անընդհատ, շարունակական կրթության համակարգ: Այդ համակարգն ապահովելու է տարբեր տարիքի ու կազմերի զինվորականների գիտելիքների մշտական ընդլայնումն ու խորացումը: Համակարգը բացի հիմնարար բարձրագույն մասնագիտական կրթությունից և ամբողջական ռազմամասնագիտական պատրաստումից, նախատեսում է լրացուցիչ մասնագիտական կրթության համակարգ, ինչպես նաև որակավորման բարձրացման դասընթացներ և մասնագիտական վերապատրաստում:

Մասնագիտական կրթության նորամուծական բնույթի ապահովումն ընդհանուր առմամբ ենթադրում է՝

- Դիմորդների պատրաստում, որը գնահատվում է մինչբուհական կրթության և ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,
- Օգտագործվող կրթական տեխնոլոգիաներ, որոնք խելամիտ կերպով զուգակցում են դասավանդման կայացած դասական և նորամուծական մեթոդները,[12, էջ 137]
- Ձորքերի պահանջներին համապատասխան՝ նոր մասնագիտություններով ուսուցում ապահովող կրթական ծրագրերի օպերատիվ մշակում ու ներդրում,
- Նոր կրթական տեխնոլոգիաների, նորամուծական մոդելների ներդրման և ուսումնական գործընթացում կիրառման համար անհրաժեշտ ուսումնանյութական բազայի ստեղծում,
- Ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվահաղորդակցային տեխնոլոգիաների, էլեկտրոնային կրթական շտեմարանների և ձեռնարկների օգտագործում,
- Ուսուցանողների և ուսուցանվողների համար գիտության ու տեխնիկայի ոլորտում տեղեկատվական աղբյուրների մատչելիության ապահովում,
- Միասնական էլեկտրոնային կրթական համակարգի պաշտոնների ստեղծում ու կատարելագործում

Մասնագիտական կրթության որակի գնահատման համակարգի ձևավորումն ու զարգացումը պահանջում են.

- Կրթական հաստատությունների և զորքերի միջև հետադարձ կապի կատարելագործում շրջանավարտների կրթական որակի, մասնագիտական գործունեության համալիր հետազոտություն կատարելու և ըստ այդմ զորքերից ստացված կարծիքների հիման վրա ուսումնական գործընթացն արագորեն ճշգրտելու համար,
- Ուսումնական հաստատաությունների գործունեության անկախ գնահատման եղանակների ու միջոցառումների ներդրում:

Ռազմական կրթության համակարգում կարևոր խնդիրներից է ստեղծագործական մտածողության ձևավորման, մտավոր զարգացման համար պայմանների ստեղծումը: Ուստի առաջին հերթին անհրաժեշտ է հրաժարվել ուսումնական գործընթացներում ուսուցանվողների նկատմամբ չափից դուրս ցուցաբերվող խնամակալությունից և խրախուսել նրանց ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը: Չնայած ռազմական կազմակերպությունում հաստատված միանձնյա ղեկավարության և աստիճանակարգային

համաստորադասության, ինչպես նաև հրամանների անվերապահ կատարման սկզբունքներին՝ ստեղծագործական մտածողությունը անհրաժեշտ է լինում անկանխատեսելի, արագ փոփոխվող պայմաններում, ոչ ստանդարտ իրավիճակներում, երբ պահանջվում են արագ կողմնորոշում ու նույնիսկ հանպատրաստից միջոցների ձեռնարկում /իմպրովիզացիա/:

ՀՀ ԶՈՒ-ի կարիքների համար ձեռք բերվող նոր սպառազինության, ռազմական տեխնիկայի և տեխնոլոգիաների շահագործման համար անհրաժեշտ է օտարերկրյա պետությունների ռազմակրթական կենտրոններում կազմակերպել ՀՀ ԲՈՈՒՀ-ների դասախոսական անձնակազմի վերապատրաստում, որպեսզի այնուհետև մեզանում ներդրվեն համապատասխան ուսումնական ծրագրեր և կազմակերպվի դրանց սպասարկող անձնակազմի որակյալ պատրաստում: ՀՀ բարձրագույն ռազմական կրթության համակարգի զարգացման կարևոր միջոցներից է համագործակցության սերտացումը ինչպես ՀՀ բարձրագույն քաղաքացիական կրթության համակարգի, այնպես էլ օտարերկրյա ԲՈՒՀ –երի հետ [5, 121էջ]:

Այսպիսով ԶԻնված ուժերի արդիականացումը, դրանց կերպարանքի փոփոխումը, նոր ՍՈՏ-ով զինումը պահանջում են որակապես նոր կադրեր, որոնց պատրաստումը պետք է կատարվի առաջանցիկության սկզբունքնով: Իսկ դա նշանակում է, որ ռազմական կրթության ղեկավար մարմինները, սերտորեն համագործակցելով ՊՆ ու ԶՈՒ-ի բոլոր վարչությունների հետ, պետք է ԲՈՈՒՀ-ների անձնակազմերի գիտամանկավարժական ներուժի լիակատար օգտագործմամբ այսօր ապահովեն վաղվա սպայի պատրաստումը՝ ԶՈՒ-ի զարգացման վերլուծությամբ ու գիտական կանխատեսմամբ, մոտ ապագայի պահանջների և հայ-ադրբեջանական կանխատեսելի հարաբերությունների հաշվառմամբ:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Տեսական և հետազոտական աշխատանքների արդյունքում կատարվել է հետևյալ եզրահանգումները:

1.Որակյալ ռազմական մասնագետների պատրաստումը ՀՀ պաշտպանունակության ապահովման կարևոր ուղղությունն է, առաջնահերթ խնդիր: Անձնակազմի ռազմական ուսուցման արդյունավետության վրա ազդում են հաստատության հնարավորությունները, ուսումնական խմբերի մասնագիտական ուղղվածության առանձնահատկությունները, ֆինանսական հնարավորությունները, կադրային ներուժն ու քաղաքականությունը:

2.Անձնակազմի կառավարման համակարգի ու դրա մոդելի արդիականացումը պետք է ուղղված լինի կրթական գործընթացների, ուսուցչական և հրամանատարական կազմերի աշխատանքի որակի բարելավմանը, նրանց, աշակերտների և ունկնդիրների աշխատանքի արդյունավետության գնահատման նոր չափանիշների ներդրմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Բալայան Դ. Կ., Հակոբջանյան Զ.Ա.,Ռազմական կրթության և կադրերի պաշտոնեական առաջխաղացման համակարգերի զարգացումն ու կատարելագործումը, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված 1(63): Եր., 2010թ.-130 էջ:

2. ՀՀ ռազմական կրթության հայեցակարգ, Կառավարության 2012թ. Մարտի 7-ի նիստի հմ 9 արձանագրային որոշման հավելված հմ 1, կետ 6:

3. ՀՀ ռազմական կրթության հայեցակարգ, Կառավարության 2012թ. Մարտի 7-ի նիստի հմ 9 արձանագրային որոշման հավելված հմ 1, կետ 21:

4.ՀՀ ԶՈՒ-ում զինվորական ծառայության անվտանգության հայեցակարգ, Պաշտպանության նախարարի 2010թ. օգոստոսի 17-ի հմ 916 հրամանի հավելված հմ 11:

5. Ղահրամանյան Ա.Բ., Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում կրթության համակարգի կատարելագործման հարցը՝ զորքերի մարտական կարողությունների մեծացման հայեցակետից, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված 1(4): Եր., 2015թ.-121 էջ:

6. Մուրադյան Վ.Ա., Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կատարելագործման ուղիներն ու միջոցները, թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2014թ-183 էջ:

7. Սարգսյան Ա.Վ., Հայ զինվորի դաստիարակության համակարգի մանկավարժական հիմունքները: -Եր., Զանգակ-97, 2002: -40 էջ.:

8. Տոնոյան Դ. Է., ՀՀ կառավարության ծրագրի մտահղացման շրջանակներում պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը, Եր., 2018թ.- 11էջ:

9. Бажина Д. В., Критерии еффективности управления организацией как социальной системой: <<Общество:политика, экономика, право>>, 2012, N1.- с.241:

10.Вохминцева Л.В., Шарапов В. И., Роль учебно-исследовательской работы студентов в современном образовательномпроцесе:<<Фундаментальные исследования>>,2007,N5.- с.152:

11.Военный энциклопедический словар:т.II. М., 2001.- с.750:

12.Григоров С. Ю., Ойношев А. Э.,Моисеев Д. А., Инновации в военном образовании как условие формирования профессиональной компетентности:<<Территория науки>>,2017, N2.-с. 137:

13.Дейнека А.В., Управление персоналом.М., 2013.–сс.7-8:
14.Жуковскайа И.Е., Инновационные аспекты совершенствования управленческих процессов в высшем учебном заведении на основе применения современных информационно-коммуникационных технологий, 2013.-с.210:
15.Зыков А. Н., Факторы, влияющие на реформированые военного образования:<<Военная мысль>>, 2014.N12.-с.175:
16.Полич В.В., Проблемы военного образования и науки (социально-философский анализ):<<Профессиональное образование в современном мире>>, 2015.N2.-с.95:
17.Сорокина Н.Д., Модернизация образования в<<знаниевом>> обществе: еффективность и оценка (постнеклассический подход), 2016.- с.108:
18.Сониченко З. И., Роль научной деятельности в профессиональной подготовке специалиста.<<Вестник Таганрогского института управления и экономики>>, 2013.N1(17).-с.68:
19.Червонных М.И., Инновации в управлении и образовании.<<Сибирский торгово экономический журнал>>), 2017.- с.23:
21. Педагогика высшей военной школы. Под ред. В.Н.Герасимова: -М., 2001.- с.175:
22. https://armtimes.com
23. https://www.e-draft.am
24. https://www.tert.am
25. https:// www.mil.am
26. https://www.aravot.am